

ՋՐԾԱՂԻԿԻ ՊԱՏՎԱՍՏ

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

1 Ինչու՞ պետք է պատվաստվել

Ջրծաղիկը որ կոչվում է նաև Վարիսելլա սովորական մանկական հիվանդություն է: Այն սովորաբար թեթև է սակայն կարող է լինել նաև լուրջ, հատկապես մանկիկների եւ չափահասների մոտ:

- Ջրծաղիկի վարակը կամ վիրուսը կարող է անցնել անձից անձ օդի միջոցով, կամ ջրծաղիկի բշտիկներից արտազատված հեղուկի հետ շփվելուց:
- Այն առաջացնում է ցան, քոր, ջերմություն եւ հոգնաճուրթյուն:
- Այն կարող է առաջնորդել խիստ մաշկային վարակման, սպիների առաջացման, թոքատապի, ուղեղի վնասվածքի, կամ մահվան:
- Անձը որ ունեցել է ջրծաղիկ կարող է տարիներ հետո ստանալ ցավոտ մաշկային ցան որ կոչվում է սողնախտ (shingles):
- Միացյալ Նահանգներում մոտավորապես 12,000 մարդիկ, տարեկան, հիվանդանոցային խնամքի են պետք ունենում ջրծաղիկի պատճառով:
- Ջրծաղիկի պատճառով տարեկան 100 մարդ մահանում է Միացյալ Նահանգներում:

Ջրծաղիկի պատվաստը կարող է կանխել ջրծաղիկը:

Ջրծաղիկի պատվաստ ստացող մարդկանց մեծամասնությունը ջրծաղիկով չի հիվանդանա: Սակայն, եթե որեւէ պատվաստված անձ *հիվանդանա* ջրծաղիկով, ապա սովորաբար այդ հիվանդությունը կլինի թեթև: Նրանք կունենան ավելի քիչ վերքեր, ջերմություն ունենալու ավելի քիչ հավանականություն եւ կկազդուրվեն ավելի արագ:

2 Ո՞վ պետք է ստանա ջրծաղիկի պատվաստ եւ ե՞րբ

- ✓ Երեխաները պետք է ստանան ջրծաղիկի պատվաստի մեկ դեղաչափ 12-ից 18 ամսական տարիքում, կամ որեւէ այլ տարիքում դրանից հետո, եթե մինչ այդ նրանք երբեք չեն հիվանդացել ջրծաղիկով:

Մարդիկ որոնք չեն ստացել պատվաստը մինչեւ 13 տարեկան հասակը կամ ավելին, պետք է ստանան 2 դեղաչափ 4-ից 8 շաբաթ ընդմիջումով:

Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը մանրամասնությունների համար:

Ջրծաղիկի պատվաստը կարող է տրվել այլ պատվաստումների հետ միաժամանակ:

3 Որոշ մարդիկ չպետք է ջրծաղիկի պատվաստ ընդունեն կամ պետք է սպասեն

- Անձիք որոնք երբեւիցե ունեցել են կյանքին սպառնացող գերզգայնական հակազդեցություն **ժելատինի**, **նեոմիցին** կոչված անտիբիոտիկի կամ (2 դեղաչափի պետք ունեցողների համար) **ջրծաղիկ պատվաստի նախորդ դեղաչափի** նկատմամբ չպետք է ստանան ջրծաղիկի պատվաստ:
- Անձիք որոնք չափավոր կամ խիստ հիվանդ են սրսկման նշանակված օրում սովորաբար պետք է սպասեն մինչեւ լրիվ ապաքինվելը՝ նախքան ջրծաղիկի պատվաստ ստանալը:
- Հղի կանայք պետք է հետաձգեն ջրծաղիկի պատվաստ ստանալը մինչեւ ծննդաբերություն: Կանայք չպետք է հղիանան ջրծաղիկի պատվաստ ընդունելուն հետեւող 1 ամսվա ընթացքում:
- Որոշ անհատներ պետք է պարզեն իրենց բժիշկի հետ թե արդյոք իրենք կարող են ստանալ ջրծաղիկի պատվաստ, ներառյալ նրանք որոնք
 - Ունեն HIV/AIDS կամ այլ հիվանդություն որը ազդում է վարակամերժ դրոսթեան վրա
 - 2 շաբաթ կամ ավելի երկար բուժվում են վարակամերժ դրոսթեան վրա ազդող դեղամիջոցներով, ինչպիսիք են ստերոյդները
 - Ունեն որեւէ տեսակի քաղցկեղ
 - բուժվում են քաղցկեղի դեմ Զ-ճառագայթներով կամ դեղամիջոցներով
- Անհատներ որոնք վերջերս ունեցել են արյան ընդհեղում կամ ընդունել են արյան տարբեր արտադրյալներ պետք է հարցնեն իրենց բժիշկին թե երբ կարող են ընդունել ջրծաղիկի պատվաստը:

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը:

Որո՞նք են ջրծաղիկի պատվաստի վտանգները

Որեւէ պատվաստ, ինչպես որեւէ այլ դեղամիջոց, ունակ է պատճառելու լուրջ բարդություններ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցությունները: Ջրծաղիկ պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Ջրծաղիկի պատվաստ ընդունելը շատ ավելի անվտանգ է քան ջրծաղիկ հիվանդությամբ վարակվելը:

Ջրծաղիկի պատվաստ ստացող գրեթե բոլոր մարդիկ բարդություններ երբեք չեն ունենում:

Թեթեւ բարդություններ

- Ցավ կամ ուռուցք սրկվման տեղում (5 երեխաներից 1-ի մոտ, եւ 3-ից 1 պատանիների եւ չափահասների մոտ)
- Ջերմություն (10-ից 1-ի մոտ կամ ավելի պակաս)
- Թեթեւ ցան, պատվաստումից մինչեւ 1 ամիս հետո (20 անձից 1-ի մոտ կամ ավելի պակաս): Այս անձիք հնարավոր է որ վարակեն ընտանիքի մյուս անդամներին, սակայն սա *չափազանց* հազվադեպ է:

Չափավոր բարդություններ

- Նոսախտ (ցնցում կամ սեւեռունություն) որպէս ջերմության հետեւանք (1,000 անձից 1-ի մոտ կամ պակաս):

Սուր բարդություններ

- Թոքաբորբ (չատ հազվադեպ)
- Որոշ այլ լուրջ բարդություններ, ներառյալ ուղեղի խիստ հակազդեցություն եւ արյան պակասություն, երբեմն գրանցվել են ջրծաղիկի պատվաստումից հետո: Սրանք պատահում են այնքան հազվադեպ, որ մասնագետները չեն կարող ճշդել արդյո՞ք դրանք հետեւանք են պատվաստի թե ոչ: Եթե նույնիսկ դրանք հետեւանք են՝ ապա ծայրահեղորեն հազվադեպ:

Ի՞նչ անել չափավոր կամ սուր հակազդեցության ժամանակ

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնես

Որեւէ արտասովոր վիճակ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցություն, բարձր ջերմություն կամ վարքի փոփոխություններ: Լուրջ գերզգայնական հակազդեցության նշաններ են՝ շնչելու դժվարություն, խոպոտ ձայն կամ հծծում, մաշկի այրոց, գունատություն, թուլություն, սրտի արագ տրոփում, կամ գլխապտույտ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամ: Եթե բարձր ջերմություն կամ ցնցում են առաջանում, ապա նրանք սրկվելուց 1-ից մինչեւ 6 շաբաթ հետո են պատահում:

Ի՞նչ պետք է անես

- Հեռաձայնեք բժիշկին, կամ հիվանդին շուտափույթ կերպով տարեք բժիշկի մոտ:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եղելության մասին, թվականն ու ժամանակը եւ ե՞րբ է տրվել պատվաստը:
- Պահանջեցեք ձեր բժիշկից, բուժքրոջից կամ առողջապահական բաժնից Vaccine Adverse Event Reporting System (VAERS) ձեւ լրացնել կամ դուք ինքներդ հեռաձայնեք VAERS 1-800-822-7967:

Պատվաստի վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Հազվադեպ պարագայում երբ դուք կամ ձեր երեխան ցուցաբերում եք լուրջ հակազդեցություն պատվաստի նկատմամբ, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր, խնամքի ծախսերը հոգալու նրանց՝ որոնք վնասված են:

Պատվաստի վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ այցելեցեք ծրագրի website-ը հետևյալ հասցեյով <http://www.hrsa.gov/osp/vicp/>

Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքուկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի ախտազերծման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետևյալ հասցեյով. <http://www.cdc.gov/nip>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program